ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

Երևան-10, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ՄԻՌՄՈԹՈՐՍ» ՍՊԸ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 2-րդ մասը և ուսումնասիրելով ՀՀ վարչապետի աշխատակազմի և «ՄԻՌՄՈԹՈՐՍ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 26.10.2023թ. կնքված ՀՀՎԱ-ԷԱՃԱՊՁԲ-23/68-1 ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ ստորև ներկայացնում եմ «ՄԻՌՄՈԹՈՐՍ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ որոշումը.

ՀՀ վարչապետի աշխատակազմի կարիքների համար մետաղի դետեկտորի ձեռքբերման նպատակով վարչապետի աշխատակազմի և «ՄԻՌՄՈԹՈՐՍ» ՍՊԸ-ի միջև 26.10.2023թ. կնքվել է «ՀՀՎԱ-ԷԱՃԱՊՁԲ-23/68-1» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիրը:

Պայմանագրի 1.1-ին կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով նախատեսված և սույն ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրությամբ՝ նույն ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող գնահատված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի 2.1.2 կետի «բ» ենթակետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի, եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական

բնութագրին չհամապատասխանող ապրանք՝ չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը: Վաճառողի կողմից խախտումն էական է համարվում, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

Պայմանագրի N 1 հավելվածի՝ տեխնիկական բնութագրի համաձայն ապրանքի մատակարարումը, տեղադրումը և կարգաբերումը պետք է իրականացվեր Ընկերության կողմից՝ վերջինիս հաշվին և միջոցներով: Սակայն, Ընկերության կողմից Պայմանագրով սահմանված ժամկետում չի իրականացվել համակարգի կարգաբերումները և գործարկումը, ինչի արդյունքում Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման կողմից տրվել է բացասական եզրակացություն և պայմանագրի արդյունքը աշխատակազմի կողմից չի ընդունվել: Հիմք ընդունելով պայմանագրի 2.1.2 կետի «բ» ենթակետը՝ վարչապետի աշխատակազմն առաջարկել է Ընկերությանը ողջամիտ ժամանակահատվածում՝ մինչև 2024թ. հունվարի 10-ը, վերացնել ի հայտ եկած թերությունները, ինչը սակայն վերջինիս կողմից չի կատարվել:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերության կողմից խախտվել են պայմանագրով սահմանված պարտավորությունները՝ փաստացի չեն իրականացվել պայմանագրով նախատեսված ապրանքի տեղադրումը և կարգաբերումը, վարչապետի աշխատակազմը՝ հիմք ընդունելով վերը նշված կարգավորումները՝ միակողմանի հրաժարվել է Ընկերության հետ կնքված «ՀՀՎԱ-ԷԱՃԱՊՁԲ-23/68-1» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագրից՝ համարելով այն ամբողջությամբ լուծված:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերության համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է

պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Ընդ որում, «ՀՀՎԱ-ԷԱՃԱՊՁԲ-23/68» ծածկագրով ընթացակարգի հրավերի 8.15 կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը ընտրված մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշումը լիազորված մարմինը հրապարակում է տեղեկագրում: Ընդ որում, սույն կետում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին:

Հայտնում եմ, որ «ՄԻՌՄՈԹՈՐՍ» ՍՊԸ-ին ուղղված 09.02.2024թ. թիվ 17/17.4/5134-2024 գրություն-ծանուցմամբ վարչապետի աշխատակազմն ապահովել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված պահանջի կատարումը:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում եմ, որ առկա են «ՄԻՌՄՈԹՈՐՍ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու՝ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերությամբ սահմանված հիմքերը և որոշում եմ՝ Ընկերությանը ներառել նշված ցուցակում:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐԻՉ ԳԱՐԻԿ ԲՈՇՅԱՆ